

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

25.01.2016թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ.Հովհաննիսյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ

գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա /

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «2015 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից ի գիտություն ընդունելու մասին» հարցը:

/Զեկուցող՝Վ.Արևշատյան /

Որոշեցին՝

ընդունել ի գիտություն ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից չորրորդ եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 16-ից 18-ը Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերության վիճակագրության բարելավումը և արդյունաբերության կատարողականի ցուցանիշների մշակումը՝ ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծության համար» ծրագրի շրջանակում «Արդյունաբերության զարգացման միտումները և մրցակցությունը ԱՊՀ երկրներում» բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

15.02.2016թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2015 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2015թվականի հաշվեկշիռներն՝ ըստ ներկայացված ծրագրերի:

/Անհատական/

22.02.2016թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Գ.Մարտիրոսյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների և միջազգային համադրումների բաժնի պետ Մ.Երիցյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան

Լսեցին՝

1.«Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների (2015 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված) հաշվարկման մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Երիցյան/

Որոշեցին՝

հաստատել 2016 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային ժամանակահատված սահմանել 2015 թվականի դեկտեմբեր ամիսը:

/Անհատական/

2.«2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթում լրացում կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին» թիվ 35-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը. որոշմամբ հաստատված հարցաթերթը «Բաժին Հ»-ից հետո լրացնել նոր բաժնով՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Լյուքսենբուրգի Դքսության Լյուքսենբուրգ քաղաքում 2016 թվականի փետրվարի 9-ից 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն: